ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԵՊՀ-ԷԱՃԾՁԲ-24/06 էլեկտրոնային աճուրդ ընթացակարգով անվտանգության ապահովման /պահնորդական/ ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 25.12.2023թ. ժամը 12:00-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Հովհաննիսյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Գալստյան /գնահատող/

Դ. Կարախանյան /գնահատող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Թաշչյան /քարտուղար/

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	ՀՎՀՀ	Էլ. Հասցեները
1	Սուր և Նիզակ ՍՊԸ	00494673	surevnizak2021@mail.ru
2	"ՀԵԿՏՈՐ" ՍՊԸ	02885842	hektor.arm@gmail.com

3. Տեղեկատվություն նախահաշվային գնի և յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդում մասնակիցները ներկայացրել են հետևյալ վերջնական գնային առաջարկները.

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	Մասնակիցների անվանումները	Գնման գին	Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ		
				Արժեք	ԱԱՀ	Գին
1	ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ /ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ/ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Սուր և Նիզակ ՍՊԸ	261000000	179900000	20%	215880000
		"ՀԵԿՏՈՐ" ՍՊԸ		202050000	20%	242460000

4. Տեղեկատվություն հայտերի գնահատման գործընթացի կասեցման և հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին.

4.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.06.2023թ.-ի թիվ 03/26-1/12074-2023 շրջաբերականը, գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել գնահատման գործընթացը՝ Սուր և Նիզակ ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումների իսկությունը ստուգելու և դրա վերաբերյալ գրավոր եզրակացություն ստանալու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և հայտերի գնահատման համար հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2024 թվականի հունվարի 8-ին ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Դ. Հովհաննիսյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Տ. Գալստյան

_____ Դ. Կարախանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա. Թաշչյան

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 08.01.2024թ. ժամը 10:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Հովհաննիսյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Գալստյան /գնահատող/

Դ. Կարախանյան /գնահատող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Թաշչյան /քարտուղար/

5. Տեղեկատվություն կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումների մասին.

5.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.01.2024թ.-ին ստացված թիվ 12/12-2/25966-2023 / գրությամբ տրամադրվել է հավաստում կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումների վճարման հանձնարարագրերի իսկության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6. Տեղեկատվություն հակադարձ աճուրդի արդյունքում յուրաքանչյուր չափաբաժնի մասով, համակարգի կողմից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

6.1 Սուր և Նիզակ ՍՊԸ-ի կողմից համակարգի միջոցով ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի հինգերորդ ենթակետը, որոշեց Սուր և Նիզակ ՍՊԸ-ի կողմից ներկայցված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Տեղեկատվություն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

7.1 <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց՝

N	Զբաղեցրած տեղ	Մասնակցի անվանում	Չափաբաժնի համար
1	1-ին տեղ զբաղեցրած /ընտրված/	Սուր և Նիզակ ՍՊԸ	1

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Տեղեկատվություն գնահատման արդյունքների ամփոփման մասին

8.1 Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին 1 չափաբաժնի համար և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ էլեկտրոնային աճուրդի կազմակերպման կարգին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Դ. Հովհաննիսյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Տ. Գալստյան

_____ Դ. Կարախանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա. Թաշչյան